

Ուլու Ճամի. — Oulou-Djami, mosquée (Erzéroum).

մաւ հեռի յարևմտից քաղաքին, մերձ 'ի շամբն Կարնոյ, այն է ռուլբին ջրաշէջ, ուր հաւք ջղեն. անուանի է գեօղն վասն ջերմաղբերացն բաղանեաց, ողբ յիշին 'ի Ե դարէ: Բնակիչք գեղջն 30 տուն: — Մոսոբրիս, առ որով Մոսոբրիս վանք Ս. Լուսաւորչի յոտս Տէվէպոյնու լերին: — Սօսոփ ջերմուկ, յորում ցրտաղբիւր հանքային: — Հինյ կամ Հնյոց գեօղ, յարևելից հիւսիսոյ քաղաքին, իբր 30 տամբք, զբաւարձագիր դարիւք, ուր և մատուռն փոքր կամ ուխտատեղի Յովհաննու Կոզման. մերձ է Հնյոց Վանքն որ և Կարմիր Վանք, հիմնարկեալ 'ի Մեծէն Ներսիսէ յանուն Տիրամօրն. և հուլ նմին Քարայրք Հոիէ սիմեանց 'ի ձորամիջի: — Գըզըլտիլիսէ և Ծաղկի գեօղ յարևելեան հիւսիսակողմն քաղաքին. 'ի սաորոտս բարձու Տոմլուլերին (19): — Սարլամ առ համանուն լերամբն և վտակաւ, յարևմտակողմն հիւսիսոյ դաշտին: — Ի սաորոտս լերանցն կայ և Խալիայ-Վանք ուխտատեղի, և Խալիայ աւազան ցրտին ջրոյ, ուր թաքուցաւ խաչափայան 'ի դարձուցանել զայն Հերակլեայ կայսեր 'ի Կոստանդնուպոլիս: — Արծարի գիւղ մեծ յորում հարիւրաւոր տունք Հայոց էին յառաջ քան զգալ Ռուսաց. են ջերմուկք մերձ նմին: — Քարոոր, քարայրք անուանիք ըստ վիպասանից, մենարանք սիրելեացն Ֆերհատայ և Շիրինայ: — Գարբրդ, Վաղոոր, Ղոնճի առ Սեաւ ջրով (Գարասու) տեղիք մեծի շահաստան քաղաքին ԱՐԾՆ կոչեցելոյ, զոր Սելջուկեան թուրքք յաղարա վարեցին յամին 1049, կոտորեալ անդ ոգիս առաւել քան զչորեքտասան բիւր: — Գաղաոոիճ Մեծ և Փոքր, որ է հինն Խաղաոյ-Ալիճ, ուր արդելաւ պահ մի Պետրոս Գետադարձ կաթողիկոս հրամանաւ Վասիլ կայսեր:

46. ԹՈՐԹՈՒՄ վիճակ կայ 'ի հիւսիսոյ դաշտին Կարնոյ, և թուի մասն ՀԱՏԳՈՄՊ կամ ՀԱՂԱԳՈՄՊ կոչեցեալ գաւառի Նորին և ՈՒՌՂԵայ Տայոց. գետակ համանուն բղխեալ 'ի Պոր լերանց որ առ Գըզըլքիլիսէիւ Կարնոյ՝ և իջեալ 'ի հիւսիս օժանդակել զՃորոխ, արբուցանէ զգեղեցիկ և զջերմիկ դաշտ իբրու 10ժամեայ երկայնութեամբ և կիսով նորին լայնութեան, որ և զանազան դրիւք և տեսլարանօք բնութեան, քարաժեռիւք և հովտօք, լճաւ և ջրվիժիւ՝ զուարճացեալ է, և առատ պտղաբերութեամբ, յորմէ և Կարին ընդունի միրգս ազնիւս: Իբրև 70 գեօղք են վիճակին, նշանաւորքն ԹՈՐԹՈՒՄ աւան յաջմէ գետակին կամ յարևելից, բերդ հին և ահաւորահայեաց ունելով 'ի բարձու քարաւերին կարկառելոյ 'ի գետն, յոր իջուցանեն և սանդուխք քարափորք: Բնակիչք 20 երդ: — Խոխոս առ համանուն վտակաւ օժանդակաւ Թորթումայ, որ 'ի գեղեցիկ հովտին ունի հրաշակառոյց մենաստան շինեալ 'ի Վրացյոց դարու և 'ի Դաւթէ կուրապաղատէ 'ի ժ.